

ՅԵՐԱՅԱՆ
ՅՈՑՊՈՒՅՑ

ԽԱՐԿԱԿ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, ՅՈՎՏԵՐԲԵՐԻ 1 -ին. Թիֆլիս. №40.

Ղ Ի Ր Ա Մ Վ Լ Ա Ն Ե Ր




ՔՕՏԵՐՔ.

—Ա՛յ, ա՛յ սրանք մեր են ասկային գործիչներն ին, վոր դալթաբանդ խասիաթ ունին. ամեն բան մրտոում ին. կաթողկոսական խնթրներու մէջ էլ խառնում ին իրենց մեղքոտ «խի» համա: Սրանց իս էսինց պատժեցի, ով վոր ձիգմէն էսիւօք չի ըլի—սրանք էլ էսինց կու պատուին.

ՅԻՆՆ.ԵՅԻՃՈՅԱ

ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ



VI

Տարի

ՄԱՔԱԲԱԿ

VI

Տարի

Երգիծարանական-սատիրական պատկերազարդ շաբաթաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱՐԱԹ ԱՆԽԱՓԱՆ


Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և գլխիչ, անկեղծ և կեղծաչոր գործիչ-կործիչների և խայտառակիչների:

Անհրաժեշտ բերք բոլոր բնագիտական համար

ԽԱՔԱԲԱԿԱՆ » շաբաթին ծիծաղեցնում է, շաբաթին էլ ցաւեցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆիդ ուզի: Հասցէն՝ Тифлиς Музейный пер., редакция „ХАТАБАЛА“.

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակիչ՝ Աստ. Երիցեան



«ԽԱՔԱԲԱԿԱՆ» ԵՐԳՈՒՄ
Բ Ա Ք Ա Ն Ե Վ Ի Գ Ե Ն Ո Ւ Մ Ո Յ Յ Յ

Տարեկան	5 ռ.
ՂԼԱ տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

Մեր թերթի բաժանորդներին «Սուր-հանդակ» ամենօրեայ թերթը ուղար-կում ենք պակաս վճարով:

100 տարով բաժանորդագրել ցանկացողին 75 % զեղջ:

Ձրի կարդացողներին պէտք է նկա-րենք գլխիվայր:

«ԽԱՔԱԲԱԿԱՆ» ՕՐԱՏՈՅՑԸ

1911 ՀՈԿՏԵՄԲԵՐ 31 օր



Суббота ՀԱՐԱԹ Ծաղստո
Հունիսի 19

ՊՕԼԻՏԻԿՈՒՐԻ ԳՈՒՐՁԻՐԸ

Վունց վուր պտի ըլէք էնենց էլ էլաւ:

Պոլիտիկոսի հուրիգոնում, էնդի՝ ձրանգատանի ու նեմեցներու աշխր-քումը ամպիրը մող էին էլի ու հես-տի գողգողոց ու էլալ (փայլատակում) էր վուր քու հաւնածը. համա մէ պատիկ քամի վիկացաւ ու էդ ամպիրը դէվէր քաշից—քաշից դէվէր ու թուրքի աչքը հանից. Օսմանլի ու Իտալի մէջ հեստի դայիմ արաքից, վուր վայնոբա էլաւ:

Հիմի վայնոբա է:

Թուրքերն ու իտալիքը կուռում ին.

Ձէր ծովի վրայ մինձ-մինձ գէմիք ին դուս բերի ու գեմիքեմէն թոփիլ ին գցի էս իտալիքը:

Թուրքերն էլ ուրիշի գէմիքով ինչ որ ապրանք ին տանում բերելիս էլի, — էդ գէմիքը բռնիլ ին ու մէջի ապրանքը. ցորէնն ու ալիքը գաւթիլ ին:

էս բանը խիստ արմանք է պատ-ճառի էլրոպում ու Ռուսէթում:

—Վունց կուլի, կուէ, վուր թրքիրը էդ թաւուր բանիլ անիլն, կուէ, էդ խօս թալանչուլի է, կուէ:

էս բանը վուր իմացել է միր Գա-լանթարը ասիլ է՝ էդ, կուէ, անկուլ-տուրականութիւնի խասիաթ է, կուէ:

Ատրպիտը կի հրամանք է արի՝ չէ թէ օսմանլիքը, կուէ, գողութէնի ու յափշտակութէնի սովորութ ու ազաթ ունին, կուէ, էնդանցի գրողներն էլ պակաս չին, կուէ, Փափաղովինց Վըր-

թանէսը, կուէ, Սաչատուր Դարփի-նեանցի խուրջին ևս ևս արաւ, կուէ, ու ուրիշներու գրաւածքները, կուէ, իր անունով փեշտիլ տւեց, կուէ, խալին էլ հաւտաց թէ Վըթանէսի՝ իրա գրածն է, կուէ:

Ախմախ խալիս, կուէ:

—էդ ժուզը, կուէ, Սաչատուր Դար-փինեանը, կուէ, շատ գրեք գրից, շատ բղաւից-ճղաւից, կուէ, համա ինչ կօտ-կէր, կուէ. վանեցի Վըթանէսը էլի լաւ վուր մէնակ նրա գրածները գողցաւ ու իր անունով փեշտիլ տւից, կուէ, կանար վուր իրան Սաչատուրն էլ գող-նայ, համա խաթրը պահից, կուէ:

Ղալայչի Մարքալն էլ, Աստուձ կինք տայ իրան ու ուճուլ-բուճուլին — հա, կուէ, էտ բանը իս էլ իմ իմացի, կօ-սէ, Աղանեանց սրփազանի բերնէն, կուէ, իմ վուր սա Ղարսումը առաչ-նուրթ էր, իմ սակութար անգճնիրով իմ լսի, կուէ:

Մաշ:

Իժում հիմա՝ էդ իտալիքը ու թրքիրը վուր կուռում ին, եարաք՝ գիղե-նաք թէ ինչի համա ին կուռում:

Իտալու թաքաւուրը մէ համակ է գրի Ստամբուլ՝ սուլթանին — իս գուզիմ, վուր քու աէրութէնի մէ իրրուրթ փայն իմը ըլի, կուէ:

Սուլթանն էլ ասիլ է՝ ֆիէ, կուէ, վննց կուլի, կուէ:

Իտալը էդ բանից բեղամաղ է էլի. էս սնաթիս «րուկի վերիս», կուէ:

Թուրքը էլի ջուղաք է տւի՝ ֆիէ, կուէ, էդ վննց կուլի, կուէ:

2 (կիր.) Տօն սրբոյն անտուրը Համբարձումի Առաքելեան, որ գնացեալ ի Պօլիս, վանն ազգի խաթրիշամութեան, որպէս զՊինկերտոնն խուղար-կու խուղարկեց զգործս և զբանս մերս և այն-տեղից գործչաց և յետ դառեալ ի Թիֆլիս—բա-զում հայնոյանս կերաւ, որ և լինի իրեն անուշ:

3 (բ. 2.) Տօն Յովսէփայ Սունուցի,—ան-ուճիկ տեսչի Երեսիսեան քարանսարայի, այսօր ի ժամու և ի տարածամու երգեսցեն—Երամբ որոտանս, վար ձայն:

4 (գ. 2.) Յիշատակ Չաւէն վարդապետի, որ երբեմն էր ի Բաղու. կանայք նաւթաքաղաքի ա-սին հետեւալ աղօթքս—Հայր սուրբ զՔեզ ունիմ միջնորդ հաշտութեանս...

5 (դ. 2.) Պանք, լօրի ընդ կակալու և ընդ ծիծաղիլ լաւ է և մարսական, բայց որ ի փոքի մուզիկ ունի—բժիշկ հմուտք՝ խորհուրդ տան այն՝ չուտիլ:

6 (ե. 2.) Յիշատակ յաղթութեան Մաննեզ Ալիի, Արդուլ-Համիդի, Ձէլիմ խանի և Առաքելի Բաբախանի: Այսօր ցերեկով արև դուս գայ. իսկ գիշերը մութ լիցի:

7 (ուրբ.) Տօն սրբոյն երկուսանեայ յայտնի «գրողաց», որ զբանս ամենայն մուստաօեցին, զմութեա հաց կերան և ի մէջ «Հորիզոնի» պար գան:

Տոմարագէտ և օրացոյցագետ
Աղբոսիոս արք-վարդապետ.



—Այ թէ վճռաց կուլի, կօսէ, ու զարբագնէքը բացիլ է. զարբագնէքը բացիլ է թէ չէ ու արաքարքոցը բան- ձրացիլ է. արաքարքոցը բանձրացիլ է թէ չէ ու իր զոշուձին հրամանք է սուր՝ գաւթեցէք, կօսէ:

Փիս բան է պատահի:
Վայնորէն ջրի վրայ ին սարքի:
Աբա էդ մոգոնելու բանն է:
Հիմի վուր զոշուձը թուշի, լաւ կուլի:

Էլի լաւ վուր էս քաղքիցը հեռու է թէ չէ, միւր Գրի մէջ լողացողները, միւր քիսաչիբը ով գիդի էնչախնէւէթ գնային էդ իտալի քիթն ու պոռնոզը ջարթէին:

Ու լաւ էլ կօնէին. ինչ ին ուզում էդ բեմուրագնիբը մեր ազիգթուրքիբէ- մէն, սրանք ձեռն ին անում, ձեռն աչքն ին հանում, ձեռն հացն ին ու- տում. ձեռն արինը խմում վուր...

Սուփ Սարքսի տէր Կօստօյի վրէն իտալ-թուրքի վայնորան խիստ շատ է ազգի:

—Իս դրանց դէզի սուզը ինչ ասիմ, կօսէ. հիմի վուր մէ անէ՞ք ասիմ ու ալօթք անիմ հախը չէ, կօսէ:

Էդ բանը վուր իմացել է «Մուշակի» պօլէտիկուրի գուրձիբ տանող պարուն Սիմոն Հովեանցը, ասել է՝ հոքուզ մեռնիմ չէ կօսէ, մեղք ին, կօսէ:

Տէր Կօստօն էլ թէ՛ մաշ միզ ինչ ին տալի, կօսէ:

—Կողոպուտը, թաղմելէն ու առաչ դնալուն հազիր է, օխտը պատարաքի, դիագարթի, ամբիձքի ու այգուն էլ ի- ժուձ կուլի, կօսէ:

—Հոգէբաժինն էլ վուր հիմիկուց չտան, զարուչ չիմ ըլի, կօսէ:

Մաշ:

Սաւայի սրամէն, հիմի պօլէտիկուրի գուրձիբը ուրիշ թաւուր էլ է:

Միւր Սրմէնովը, էն վուր՝ էն մէկէլ տարին պերվօկլամնի արտեուր էր ու բէժիսուր—էս տարի վունչինչ է ա՛յ:

—Չուբալովի թրիարունը ձիւ տիզ տւին, կօսէ, Կատուշիս ու ինձ, կօսէ:

„Հորիգոնի“ պօլէտիկուրի գուրձիբի տէրն էլ ջուզար է սուի:

—Էդ ինչ բեսար նամազուլ ին արի, կօսէ:

—Ուրիշին—ասիլ է Սրմէնովը, հա- յիրը կու փոշմանին, կօսէ, իժուձ իս անպարա պիտի լինիմ, կօսէ:

—Էս մէկը բախշէ, ասիլ է պօլիտի- տիկուրը:

—Ձէր փիքը անիմ, կօսէ:

Հիմի էստի էլ փիս-փիս ու սիւ-սիւ ամպիր ին մօզ էլի:

Ձհաննամը, էդ էլ վունչինչ, հիմի ա-

սում ին, խօսկ կայ, վուր միւր Ստամբո- լի տղերանց ու էւրոպի մէջն էլ կանայ վուր վայնորա սարքի:

—Շուտ վիրչացրէք կօսէ, վայնո- րէն թէ չէ... ասել ին միւր տղերքը:

Էս բանն էլ խիստ է գցի բիրժի վը- րէն ասիգնացէքի գինը:

Գուտեմբերգ Գալուստը ասում է մէ օրումը, կօսէ, օխտը միլիօն վաս քաշեցի, սաւայ զարդերիցը, կօսէ, վուր մէ էտղբամ էլի կուլի կօսէ:

Տէր Գուտօն էլ էլի էն ա ասում՝

—Պօլիտիկուրի գուրձերեմէն քիչ է մնում, վուր մէ վանք փախչիմ ինձ հա- մա ստամբա սարքիմ ու ասկի համա փիքը անիմ, կօսէ:

Թուրքերն. էլ վուր իմացիլ ին թէ հախը չին ուզում վուր վայնորա ը- լի, մարթ ին զրկի Հոսմ՝ իտալներու մօզ՝ միզմէն ձեռք քաշեցէք թէ ձիւ պապի ամիլած միրուքը կու սիրիք, կօսէ:

—Էդու վրէն իժուձ կու փիքը ա- նինք, կօսէ:

Էս բանը հիմի խօսք ու զրոյցի մա- սալա է դառի քաղկուձը—«Տիֆլիցկի Լիստոկի» Սաչատուրովը հրամանք է արի՛ իս իմ զոշունին կու զրգիմ թեհ- րան ու տեսէք թէ վունց իմ էփրեմին կարքայուձ անիլ տալի, կօսէ, մաշ կու թողնիմ, վուր Մամէդ Ալին բեդամազ ըլի. ու չոլ ու մէշ նընգած օլլու- շաղօմէն ձեռք քաշած ապրի, կօսէ:

Ասում ին միթոմ թէ էստի կանայ ըլի, վուր արևի խաւարումն էլ պա- տահի:

Սօմ տեհնում իք խանգիսխան լու- սինն էլ չէ դուս գալի. էդ ինչիցն է. հալբաթտա միզէզ կունենայ էլի. էփ- րէմ էպիսկոպոզի բանն է դժւարը:

—Իս, կօսէ, մէ պատիկ մարթ իմ ինչ կօնիմ, վուր էս թաւուր մինձ աների մէջ ին ինձ գցի, կօսէ, ձմեռը, կօսէ, մենակ էրկու թուձի փէտ չի հերիք անի, կօսէ՛ իս էդու միզէզով գուզիմ վուր էչմիաձնում ասկային ժողովում խօսկ ըլի, կօսէ:

Էս բանի համա հիմի Օխանէս Թու- մանովը ժողովիբ է անում ու գուզէ հաստատի, վուր էփրէմ էպիսկոպոզը դրուստ չի խօսում ու խարթախում է մտքիբը, փաքտիբը:

— Էփրէմ էպիսկոպոզին, կօսէ, իսկի էդ սուն ու տիղն էլ՝ միւր պէտլած քաղկի առաչուրթարանն էլ քիչ է, կօ- սէ, նա էնղբամ մինձ ու պատաւար մարթ է, կօսէ, դրա համա «պիտոյ» է կօսէ, թագա կաթղիկոսարանը:

Բաս:

Էփրէմը էդ բանը չի ուզում. ինձ սուփ Սարքիսի օթախներն էլ հարամ է, կօսէ:

Էստու վրայ կարա ըլի, վուր ունը ինգլիզական վայնորա ըլի. միլիոն չէ լաւ կուլի:

Ձհաննամը, էտ էլ վունչինչ:

Վանքի խումբը պակաս պօլիտիկու- րի բան է. Տիֆլիցկի դաղէթներում իրիք իրիք դուժին թղթիբ է գնացի՝ սրա խումբը ուփրօ լաւ է երբում— ու նա կօսէ կի՛ էնէնց էլ լաւ չէ՛ կօսէ:

Հիմի բանը էսենց է:

Ո՛վ կանայ աւտայ թէ ֆրանգն ու նեմենցը դարմաղալ կօնին ու իտալն ու օսմանլուն կու կուլին:

Ներսէս Վարժապետով լուսահոքի պատ- րիարքը հրամանք է արի՛ թէ՛ Հայաստանի վրէն պատկերներ գրեցէք, տեղիկազիր պատրաստեցէք ու Հայաստանում եղած վարժապետները, վարժապետները կու գրին, պատրիարքի հրամանը կու կա- տարին՝ իժում էտ ամենը կու տան Սաչատուր Դարվինեանին, վուր բերի պիտլած Տիֆլիս, համա ճամփին մէ տանուհինգ տարեկան տղի՛ Վրթա- նէս Փափագեան անունով սրա ճան- կերը կու նընգնի, խուրջինը ձե- ուրց կու առնի ու գրած բաներու վրէն՝ իր անումը կու գրիլ տայ՝ կու- փեչտիլ տայ՝ ու իփ վուր անում կու հանէ՛ հեղինակ կու հոչակի—էդ բա- նի գօրութիւնը գիտցողները իփ վուր կու խօսին, Վրթանէսը կուգայ կու խնթրէ միւր բէդախտուր էրիցովին, Գասպար Կալատուզովին էլ հիզը, թէ

—Ի սէր Ասժու, կօսէ, ինձ քոմազ արէք. ու իփ վուր իս՝ Գասպար աղա Կալատուզովա էլ՝ կօսիմ նրան, թէ՛

—Աղա ջան թէ վուր գուզութին իս արի, մաշ էլ քիզ թողութին չկայ— դժոխքի փայ պտիս դառնայ. նա էլ պատասխանիլ է՝—թէ արքայութէնին սովբել իմ, դժուխկ չիմ կանայ գնայ, կօսէ:

Իժում իս, Գասպար աղա Կալա- տուզովա էլ ասիլ իմ՝ լաւ տղա իս՝ կեհաս. թէկի հարամ հաց իս կ երի,— էդու համա էլ հիմի կու վիկենայ ու «Սաթարալին» կու գընի՞, բա էս բա- նը հիմի հանելուկի խարջ չէ:

Իս ու իմ հոքին, վուր՝ է:

Խաթար աղա Կալատուզով




ՅԵՐԱՅԻՄԱՆ
ՆՈՑՔՈՐՈՅՑՑ



—Վենստիառներ, լաւ լսեցէք, ո՞վ է լինելու հայ ազգի ընտրեալը, միթէ կրկին աթոռը պիտի լինի կուսակցական դիտումների տաւտիրան:

Գերմանիայում հայ ուսանողը



Գրեճեսուր.—Ձեզ մեղադրում են, որ տպած գրքերից նիւթեր էք զողանում ձեր շարագրութիւնների համար և ձեր անունով կնքում ասի:

Ուսանեալ.—Ի՞նչ կայ զարմանալու. մեղանում անուն հանած զբողներ նոյնպէս են անում, վրայասան թէ փիլոսոփայ այս փէշակին են դիմում. դա մեղանում աղաթ է. ամօթ չէ:

Ե Ր Կ Ի Ո Ր Ե Ա Կ Ն Ե Ր



Կ Ն Յ Յ Է Բ Ո Ո Ղ Ն Յ Զ Ը

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Գարունն եկաւ այնպէս քնքուշ
Չեփիւնները շնչեցին:
Գարունն եկաւ անսուշ անսուշ
Կունկները կանչեցին:

Գաշա ու հովիտ քար ու քարափ
Մուգ կանաչով ծաղկեցան,
Երկինքն անամպ, ծովերն անամպ
Ձերմ ճածոնչով զուգեցան:

Սիրաս զնգաց, խոր կարօտով
Կանչեց թռչնիս տարագիր,
— Եկ, իմ անգին, հասիր շուտով
Ու նոր երգդ նւագիր:—

Որ իմ թխպոտ ձմեռն անցնի,
Անցնի՞մ վիշտս, որպէս ծուխ.
Որ իմ սիրտն էլ նոր կեանք լցնի
Սիրոյ երգդ հոգեբուղիս...

Գարունն եկաւ այնպէս սիրուն,
Լաւ են այնպէս դաշտ ու լեռ.
Բայց իմ սրտում՝ պիւտակաւ արիւն,
Եւ հս... դարձեալ անընկեր...

Ա. Խոնդկարեան

ԱՂ-ՍԵՆՍԻԿԼԻ ՓԵԼԵՏՈՆԵՐ

Սուրբ գիրքն ասում է՝ «Ձի արմատ ամենայն չարեաց արժաթասիրութիւնն է»:
Իսկ ես դրան կաւելոյցնեմ՝ «Ձի արմատ ամենայն չարեաց մօզայասիրութիւնն է»:
որին, իբրև արտաքինը գեղեցկացնողի, սիրում ու պաշտում է ամեն մի անհատ, որի սրտի լարերը այնքան քնքոյշ են, այնքան նւրբ են, որ ճանճի հասարակ տղպոցն անգամ գայթակղեցնում է նրան:

Մօզան արտաքինը գեղեցկացնում է, կասի քեզ դրանով հիւանդացածը:

Բայց թքած այդ գեղեցկութեանը վրայ, եթէ ներքինիդ վայելուչ գիրք չես տւել,

Երևակայեցէք, թէկուզ առանց այէրօպլան շրեապայի, բայց արհեստագին գեղեցկութեամբ և շքեղագարդ մի տիկին, որի ներքինը ժահրով է լցւած, իսկ սիրտը՝ ամուսնուն դաւաճանելու տենչանքներով: Ինչ է նրա այդ արտաքին գեղեցկութիւնը եթէ ոչ մի ուրուպթ, մի ուստայն, որի սարգը ձեռն ընկած միամիտ ճանճին ծծում է մինչև ոսկորները:

Օրինակներ, շատ:

Հարցրէք թէկուզ փալաս ամուսիններին, որոնք իրանց կանանց հաւատարմութեան վրայ այնքան են հաւատացած, որքան էքսշահը հաւատացած էր Պարսկաստանին տիրապետելու և դահը նորից ձեռք բերելու վրայ:

Քաղաստուն բուրբ ստացող այդպիսի փալասներից մէկի կինը, առելի գեղեցիկ երևալու համար և համ էլ իբրև կին մօզայի սուրբ օրէնքը շխախտելու համար առա-

ջարկում է ամուսնուն 25 բուբանոց շրեապա գնել:

Ամուսինը չի համաձայնում, որովհետև նրա ուժերից վեր է լինում այդ:

Երկու օրից յետոյ կինն արդէն ծածկում է իր ցանկացած 25 բուբանոց շրեապան, բայց ճրտեղից, ամուսինն իմանում է միայն այն ժամանակ, երբ պահարանը բաց է անում կիրակի օրւայ 50 բուբանոց շորերը հագնելու և տեսնում է դրանք անյայտացած:

Այստեղ շրեապան դաւաճանեց շորերին, — տրամաբանական եզրակացութիւն — առաջնի տէրն էլ կըդաւաճանի երկրորդի տիրոջը:

Ո՞ր քեղից առաջացաւ այս անհաւատարմութիւնը, եթէ ոչ անիրաւ մօզայից, թէև այդ կինը հէնց բնութիւնից պարզեատուրած է եղել այդպիսի բնատրութեամբ:

Ուրեմն՝ մէկը միւսին ձեռք է մեկնել:

Եթէ մի բուբ է ինձ իրաւունք տային, հաւատացնում եմ, ամեն բան թողած կըստանայի դէպի Պարիզ, կըհրամայէի բանտարկել բոլոր մօզաների հեղինակներին: Այդտեղից կըվերագոնայի թիֆլիս և կըհրամայէի կանանց շրեապանները ուղարկել Մադրասա խաղող ամելու, իսկ մարմնի վրայի բարձերը քանդել և միջի բամբակը կամ բուրբը բաժանել պսակել ցանկացող աղքատ օրիորդներին պսակի անկողիններ պատրաստելու համար:

Կըհրամայէի հանել նեղ շրջագոտները և ուղարկել Կուզիան Միխայիլ մէջն ամուխ ամելու կամ թէ Մետեխի բանտը՝ բանտարկեալներին հագցնելու համար, իսկ բեղիկիւնները բաժանել զաւառի հայ վարժապետներին ստացած բոլբոլ ոսճիկները լեցնելու:


Կըհրամայէի բոլորի բանուզովի մագերը բաժանել իրենց տէրերին և բաւականանալ այնքանով, որքան բնութիւնն է տւել նըրանց, իսկ պուզրին և ներկերը իրենց կարօրկաներով, ուղարկել կըտայի Դրամատիքական ընկերութեանը ազգասիրաբար զորձածելու համար:

Եւ այս ձեռով պղոկած կանանց կասէի «գնացէք այսուհետև քարոզեցէք ամենուրեք վասն վերացման մօզայի յանուն ամուսնոյ, որդւոյ և գրպանի նորան»:

Ահա այսպիսով ես վերջ կըտայի անիրաւ մօզային, որին գոհ են գնում շատերը և որից անդառնալի կերպով տուժում է ամուսնու գրպանը, իսկ կնոջ բարոյականը:

Ես լսեցի մի անոյշ ձայն,
Բայց անփոստ որ երազ էր...

Փարեմուզ



Ա Ն Կ Ի Տ Ա

ՉԻՄՈՅԵՅՁՈ

Պատկասելի «Հորիզոնի» լիբրարիայի տակաւին չգիտենալով, բայց ցանկանալով իմանալ թէ ինքը, որ կուսակցութեան է պատկանում դիմել է «Հովիտի» խմբագրութեան հետեւալ բաց նամակով:

Բաց նամակ «Հովիտ»-ի խմբագրութեան

Ձեր թերթի № 38-ում պ. Կատոնը «Էջմիածնի լուս գործունէութիւնը» վերնագրով յօդուածում խօսելով Կ. Պոլիս ուղարկւած ցուցակի մասին, իմիջի այլոց գրում է. «Ցուցակի մէջ գրւած անուններից պարզել է նախ որ նրանք բոլորեքեանք էլ — շատ չընչին բացառութեամբ — պատկանում են այն կուսակցութեան, որի օրգանն է «Հորիզոն» լրագիրը...»:

Արդ խմբագրութեանս պահանջում է ձեզանից, այնպապա յայտնել հրապարակօրէն, թիֆլիզի օրաթերթերիցից մէկում, թէ «Հորիզոնը» ինչ կուսակցութեան օրգանն է:

Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ կարեւոր հարցի համար բացի «Հովիտից» գուցէ և ուրիշ խմբագրութիւններն, խմբակցութիւններն էլ ու մասնաւոր անձինք ևս կցանկանային արտայայտել, ուստի մենք ակնհայտ ենք բացում և առաջարկում ենք ամենքին, յայտնել իրենց կարծիքը, թէ «Հորիզոնը» որ կուսակցութեան է պատկանում:

Մենք պատասխանները կըտպենք. իսկ «Հորիզոնի» որ կուսակցութեան պատկանելու համար ճշգրիտ հարցը լուծողի պատկերը կըտպենք մեր թերթում, որպէս պրէմիա:



Մ Տ Ք Ե Ր

(Սուրբ տոպրակից)

Սէրը հարեցնում է, իսկ ամուսնութիւնը .. ուշիարացնում:

☘ Սէրը տղամարդի կեանքում մի միջանկեալ դէպք է, իսկ կնոջ կեանքում՝ ամբողջ պատմութիւն:

☘ Ինչ որ տեսնում են՝ ուզում են ունենալ, իսկ ինչ որ ունենն չեն տեսնում:

☘ Թշնամիները մեզ ուղղում են, իսկ բարեկամները՝ փչացնում:

☘ Չարիւթներն իրաւունքներ ունի, իսկ ծերութիւնը՝ պարտականութիւններ:

Համայնացրեց՝

Եզոպ ծայրայեղ վարդապետ



ԵՍ ԻՆՉ ԱՐԻ

Սուր ձորերից մէկում, մի հին ջրաղացի մէջ, ապրում էր ջրաղացապան Գէորգը:

Մի իրիկուն մինակ նստած, կրակ էր վառում, մին էլ առջևը կանգնեց մի սատանայ և սկսեց կրկնել այն բոլոր շարժումները ու գործողութիւնները, ինչ որ անում էր Գէորգը:

Սատանան այդ գիշեր մինչև լոյս հանգիստ չտուց Գէորգին: Գէորգ ուզում էր խրփել, սատանան ևս մի փայտ էր անում և պատրաստում էր խփելու. ուզում էր փախչել—նա ևս հոռից: Այսպէս կրկնեց մի քանի գիշեր: Երկար մտածեց Գէորգ այս բանի առաջն անելու համար և վերջապէս հնարը գտաւ:

Մի իրիկուն մթնեց թէ չէ, կրակը վառեց, առջևը դրեց մի աման ձէթ և սպասում էր սատանի գալուն: Եկաւ սատանան, կանգնեց նրա դիմաց և սկսեց իր ծամածուծութիւնները:

Գէորգ հանեց շորերը, մերկացաւ. սատանան նոյնպէս կրկնեց և ասաց «ես ինձ արի»: սատանան նոյնը կրկնեց և ասաց «ես ինձ արի»: Գէորգ շարունակեց մարմինն ձէթ քսելը, կրկնելով «ես ինձ արի» խօսքը. սատանան նոյնպէս:

Երբ ամբողջ մարմինը ձէթ քսեց, Գէորգ գլուխը ամբողջովին թաթախեց ձէթի մէջ ու առաւ կրակի վառող փայտերից մինը: Սատանան նոյնը արաւ ու վառած փայտը ձեռին սպասում էր Գէորգին:

Գէորգ վառած փայտը մօտեցրեց գլխին ու գոռաց—«ես ինձ արի»:

Սատանան վառած փայտը մօտեցնելով գլխին անզգուշաբար վառեց ու սկսեց գոռալ «ես ինձ արի. վայ, ես ինձ արի»: Սատանան վառում էր, իսկ Գէորգ հանգիստ նստած նայում էր երան, թէ ինչպէս վեր-վեր էր թռչում ու գոռում «ես ինձ արի»:

Սատանայի ձայնի վրայ դուրս թափեցին մի քանի սատանաներ ու տեսնելով, որ իրենց ընկերը վառում է, ուզեցին օգնել նրան. բայց լսելով որ գոռում է «ես ինձ արի» խօսքը, նրանք յետ քաշեցին ու ասացին, երբ որ դու քեզ արիր, կուզես վառել ինչ կուզես եղիր, մենք ոչինչ չենք անի, ու թողին հեռացան:

Ում համար որ պտտում եմ առակս, թող հասկանայ:

Զնգալեան

ԹԵՏՐՈՆԸ ԳԵՆՉԵԿՈՒՄ

Կիրակի սեպտեմբերի 18-ին ըստ յայտարարութեան դրամատիկ խմբի, քաղաքային ժողովարանի դահլիճում պիտի ներկայացուէր Ժիրարդէնի «Մանկութիւն» պիէսան:

Ներկայացման տոմսակները վաճառելու համար դերասան Անդրանիկը նստել էր թատրոնի մուտքի առաջ (տեղը շատ սկւազնոյ էր) և գանձակեցիները գալուն այնքան

սպասեց որ վերջը մտնեց ու «խարհուխ» ընկաւ: Իսկ երբ, ձեռքը ցնցելով, նայեց որտեղ այնքան փող չկար, որ իր թիւը լիճի վարձը վճարելուն բաւականացներ, այլ խմբի անդամների բիւրոյը անելու անգար, քիչ մնաց որ ուշաթափել, և նա կիսաուշաթափ վիճակում յայտարարեց՝ թէ ներկայացումը յետաձգում է...

Թատրոն չգնալու պատճառը գանջեցիք սա պէս են բարբառում:

Քնքոյշ սեռը մեղքը ձգում է «Մանկութիւն» պիէսայի վրայ, որի բովանդակութեանը, իբր թէ, նախօրօք ծանօթ են եղել մեր փափկասունները, ուստի նրանք «սիրային» և «սեռային» տեսակէտներից նոր բան չեն սպասելիւ եղել այդ պիէսայից...

—Եւ իսկապէս ինչ օրինակ պիտի վերցնէին նրանք մի տ. Մատիլայից, որը իր ամուսնուն մի անգամ դաւաճանել է, այն էլ, նրան սնանկանալու խայտառակութիւնից ազատելու համար միայն:

Մինչդեռ ներկայումս գեղեցիկ սեռը այդ մանապիտութեան մէջ՝ համաձայն «Փարիզեան վերջին ժամրի» այնքան է առաջադիմել, որ մողային հագուստների պէս տարեկան 99 անգամ փոփոխում է նաև իր «սիրային» և «սեռային» յարաբերութիւնները և ձևերը...

—Իսկ ժողովուրդը՝ մանաւանդ սուևտրականները իրենց թատրոն չդալու յանցանքը դարձեալ փաթաթում են «Մանկութիւն»-ի շրջափին:

--Նրանք պատճառաբանում են, թէ Գան-

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

Ա Ն Ի Ր Ա Ն Ե Ր Ա Ն Ե Ր

(Վէպի կմախք)

Լսիր ընթերցող. արի՛ քեզ տանեմ մեր քաղաքը, մի տուն, աւելի շուտ մի պալատ, ուր ապրում է պ. Գամփոռանը:

Նա մի հոշակած փաստաբան է, որի տան արտաքին դռան մետաղէ տախտակի վրայ շեղագրւած է—Присяжный поверенный—այսինքն երգեալ հաւատարմատար. բայց թէ այդ անհաւատ հաւատարմատարը. ում անունով է երգում—ես այդ չգիտեմ:

Շատերը անւանում էին նրան՝ շրջագետներին թագաւոր և չէին սխալում, նրա ծանօթները, բարեկամ-չարեկամները, Աստածներն ու սարուկները... բոլորը երկարամտներ էին, իսկ կարճամտներից ոչ մի ծանօթ չունէր և չէր էլ ցանկանում ունենայ:

Այն օրւանից, երբ նա իր պօրտֆէլով երկաց դատարաններում—քաղաքի ամեն ազնիւները ընդմիջտ զրկեցին համեստար կարմրելու ընդունակութիւնից, շատ ընտանիքների սրբութիւններ խախտեցին, շատ ամուսիններ դէպի կոնսիստորիա վա-

զեցին, շատ յիմար այրիներ էլ ինքնասպան եղան...

Նրա աչքերում մի արտասովոր ձգողական ոյժ կար, շնորհիւ որի, կարծես ստիպւած փափիկ սեռը ենթարկում էր նրան:

Եթէ մէկ-մէկ արձանագրել նրա դժոխային սիրոյ արկածները, այդ անսովորութեան մի նոր էպօպէյ կը բանար, առանց այն էլ այս արքիւ խեղճեան օրերում, կասեմ միայն որ նա և աթէիսա էր, և ֆէմինիստ և էգիստ ու որցիստ և զահրումարիստ, երբեմն էլ հակաւ դէպի կաշիքեր-թողիզմը:

Յաճախ նա գործեր էր վարում երկու ինտանցիաներում, երկու կողմերին էլ լացացնում էր և կանխապէս շորթած փողերը, գնում թողնում էր Ռոստօվում, իրանից ընթար Չարախչանի «Պալերմօ» կաֆէշանտանում:

Գեղեցիկ էլ չէր այդ փուշը, թէ ասեմ կարճամիտ եւաները—նրա այդ արժանիքից էին հմայւում.—Մանկե-Ալիի օխշում ախպօրը տեսած էք «Նորիզոնի» խմբագրատանը—այ հէնց ճիշտ նրա նման էր—քիթը կէս փթանոց, բիւրը խոզի ջագարի պէս կոշտ, կեղտակարմրին տուղ ու ցիցցից, շորի յետին փէշն էլ այժի պոչի նման միշտ դէպի վեր ցցւած...

Հա մոռացայ ասել—առանձնապէս աջ յոնքի վրայ էլ մի սպի ունէր: Ասում են—

երբ նա մի ժամանակ իբրև յեղափոխական (մեղայ քեզ Աստած) աքսորւած է եղել Օրենբուրգ, մի մութ գիշեր բոնի համբուրել է փողոցում մի МАТУШКА-ի և երբ լսել է վերջինի ամուսնու «ЛОВИТЕ, ЛОВИТЕ!» աղաղակը, գլուխը կորցրած փախչելիս, յօնքը խփել է հեռագրասիւրին ու կոտրել...

Ես շատ յաճախ զբօսովայրերում տեսնում էի այդ վատ մարդին այլ և այլ դիւրահաւան ու դիւրահաւատ գեղեցիկօճիների հետ ու սկամայից յիշում էի պարսկական սուսձը—«Չամանա բան, էշագլար արփա եյիլլար, աթլար զալդիլար մաթալ—սամանա»:

Գամփոռանի փառաւոր տան ամենաստորին յարկում, մի խղճիկ սենեակում ապրում էր շարքաշ բանուր Եղունին— իր 14-ամեայ չքնաղ դստեր՝ Արփիկի հետ: Սգաւոր էին նրանք: Թէև շատ չէր անցել այն օրից—ինչ եզունին հողին էր յանձնել իր տխրութեան օրերի միակ ընկերուհուն, բայց այնուամենայնիւ չէր համաձայնում տալ դստերը հարուստ տիկին X-ին, վերջինի ընդմիջտ արտասահման տեղափոխելը աչքի առաջ ունենալով, որով մի անգամ ընդմիջտ պիտի զրկէր իր մանուկ դաւակի հետ յաճախակի տեսակցելուց:

Նա ըստ երևոյթին պատրաստ էր զիջելու Գամփոռանին, որը ամեն գիշեր իջնե-

ձակի վաճառականներից շատերը «անանկանալու» մէջ այն էլ կեղծ՝ այնպիսի հըմուտ արտիստներ են, որ Անդրանիկի նման 300 դերասանի դաս կըտան այդ առարկայից... Եւ իբրև փաստ, նրանք մասնացոյց են անում քաղաքումս այնպիսի վաճառականների վրայ, որոնք կարճ ժամանակամիջոցում, վեց անգամ կեղծ կերպով անանկացել են ու խոշոր փողեր տակը դրել...

— Եւ այդպիսի արարքների համար նրանք՝ փոխանակ ժողովրդի ծաղրին ու արհամարքին արժանանալու, ընդհակառակը պատուաւորները շարքն են դասուում շքանշակատող ուզուն-դուլաղների կողմից...

Երեքշաբթի սեպ. 20-ին խաթարալիստների միջից հաւաքած մի քանի մարդկանց ներկայութեամբ կայացաւ յետաձգւած ներկայացումը, որի բեցնդիւն այժմս համեցեք՝ եր անում «Սաթարալա»-ի ընթերցողներին:

Պ. Անդրանիկը Անրի Դիւմոսի դերում՝ դատարկ դահլիճին նայելիս նամուում էր ոչ թէ Պարիզի սեղանաւորի, այլ Եղիայ մարգարէին, որը գուշակելով Երուսաղեմի կործանումը՝ ողբալով վայ էր տալիս Իսրայելի դաւակների գլխին: Իսկ տ. Ազնիւը Մատիլդայի դերում իր սիրեկան Ալվարեցի (Շահէն) ընդխին նայելիս «քեզ սիրում եմ» խօսքերը այնքան զժգոհութեամբ էր արտասանում, որ մեր տիկիները և օրիորդները ականատես լինէին նախանձելուց կը տրաքէին... ու էլ այսուհետեւ սիրահարութիւններ չէին անիլ...

— Շահէնը Ալվարեցի դերում նման էր ոչ թէ Պարիզի միլիարդէրի «կանանց սրտեր որսող», բարժուայի, այլ լարախաղացի տակը վազվզող «քոսագալի», որը իր ծամածուծութիւններով անց ու դարձ անողները ուշադրութիւնն է հրաւիրում լարախաղացի վրայ...

Իսկ կոշիկների ցեխը՝ տեսողներին կարծել էր տալիս, որ նա, նախ քան ներկայացումը, մեր փողոցների ցեխը մաքրելիս է եղել քաղ. սանիտար Սերովր-Բէգի ձեռքի տակ եղող մշակների հետ միասին...

Մոտակ

ԱՆՀԱՒԱՏԱԼԻ ՆԵՐԿԱՅԻՑ

Շատ ցաւում եմ ընթերցող, որ «Սաթարալան» իրաւունք չի տալիս նախ և առաջ մինչև ասելիքս մի քիչ մանրամասն պատմութեանս նախաբանը կամ առաջաբանը գրելու, այնպէս որ ուղղակի դիմում եմ բուն գործին վաղորօք երգելով որ գրածս ճիշտ կատարւած և կհանքից վերցրած պատկեր է և ոչ մարտողութեան համար մտածւած սրախօսութիւն և ծիծաղեցնելու «պընկ»:

Աշխարհիս երեսին կա մի քաղաք Թէոդոսիայ անունով կամ Թ. քաղաքը, որտեղ ապրում են մի խումբ հայ մարդիկ, բայց լաւ խումբ, թւով մօտ 120—140 տուն, լաւ ասածս թւի մասին է և ոչ թէ մարդկանց լաւն ու վատը որոշելու, ունեն մի տէրտէր մի քանի եկեղեցի և մէկ ուսումնարան:

Թողնելով մի ուրիշ անդամաւ, խորհրդով թեան համար, թէ տէր-տէրին, թէ եկեղեցիներին, թէ ժողովրդին, այն անգամ լաւ սենք ուսումնարանի մասին:

Տարւոյ սկիզբը մօտենում է, աւագ ուսուցիչը դիմում է հոգաբարձուներից մէկին ասելով, որ ուսուցչական կազմը լրացնելու համար հարկաւոր է հրաւիրել մէկ ուսուցիչ:

— Լաւ... գրիր գայ էլի էտ վարժապետը, ասում է հոգաբարձուն:

— Մնդրեմ պ. հոգաբարձու ավանս տալ, որ ուղարկեմ այդ ուսուցչին:

— Հա, ավանս... լաւ... որքան ա հարկաւոր:

— 50 ռուբլի.

— Վա՛ ի՞նչ հարկաւորա 50 ռուբլի:

— Ուսուցիչը գալիս է Թիֆլիսից ուրեմն միայն ճանապարհածախք հարկաւոր է մօտ 25 ռուբլի, բացի այդ մանր ծախսերէն, երևի կունենայ նախնական ծախքեր ևս...

— Ի՞նչ էք ասում... մենք էտ ճանապարհ լաւ էնք իմանում, Թիֆլիսից մինչև Բաթում բիւտի մէկը արժէ 4 մանէթ, իսկ Բաթումից մինչև այստեղ ըստըր արժէ 3 մանէթ, մին 2—3 մանէթ էլ թող ճանապարհին ուտի, էլ ուրիշ ի՞նչ է հարկաւոր...

— Բայց պ. հոգաբարձու, ի՞նչու պէտք է ուսուցիչը երրորդ կլասով և պալուբի վրայ ճանապարհորդէ, մի թէ արգելում է նրան երկրորդ կլասով գալը...

— Վա՛ էդ ի՞նչ խօսք ա, վարժապետը ինչու պէտք է երկրորդ կլասով գայ, ընդհակառակը եթէ նա խելօք տղայ է կարող

ով իր Եղեմից, այց էր գալիս նրան գաւազան նւէրներով ու կարեկցելով հանդերձ ունեն ցանկութիւն էր յայտնում—որդեգրել որը Արփիկին, միաժամանակ մի թեթեւումար էլ բաշխել իրան սև օրւան համար: Եւ ի՞նչ ասել կուզէ, բանւորը յարգելով որա քրիստոնէական բարձր մարդասիրութիւնը, վերջապէս չկարողացաւ չհամոզել:

կեր արդէն քամել էր նէրա հոգու ու մարմնի բոլոր հիւթերը, խլել նրանից այն ամէնը—ինչ որ կազմում է կոյսի հարստութիւնը:

Եզունին՝ իր մեծնող զաւակի մահճի շուրջը արձանացած, խիստ պաղարիւն լսեց նէրա խոստովանութիւնը ու գորովազին հանգստացնելով—դուրս եկաւ տանից ու դի՛նց դէպի Գամփոեանի ուժեղ լուսավաւում անանձնասենեակը, ուր վերջինը մի անպարկեշտ կնոջ հետ շահմատ էր խաղում գիշերային մի խեհնշտութեան ազարտով... ու կինն էլ ցինիկ ծիծաղով ատամները բացած գեղգեղում էր—

— Ахъ, кабы ночь поскорѣй...

— Ադա՛... լսեց կիսաբաց դռան յետեից անվստահ Եզունու խեղճ ձայնը:

— Հը... ով է, ինչ կայ... ի՞նչ յիմարութիւն է... յետոյ...

— Ադ... — Գնա, գնա, ես ժամանակ չունեմ...

— Ադա՛, դուք գիտնական մի մարդ... և դեռ խօսքը բերանում, մի ուժղին ապտակ իջաւ նրա դէմքին ու դուռը յետ փակեց:

Երկար երկար կանգնած էր նա միկնոյն դիւրի մէջ:

— Չնչին, չնչին մարդուկներ ենք մենք, թոյլ, փոքրիկ...—մըմնում էր նա, ինքն իրանից գգելով:

Նրա գայրացած հոգում յանկարծ պորթկաց արդարացի վրէժնդրութեան կրակը ու ձեռքը գրպանը տանելով նորից հրեց դուռը:

Այս անգամ արդէն կատաղեց անիրաւաբանը ու մինչ կրդիմէր նրան, Եզունին ծղրուտաց վիրաւոր յովազի նման ու յարձակելով ֆիննական դանակի մի զոյգ հարւած հասցրեց... թէև նա չստանակեց:

Հետեւալ օրը նրան բանսն էին տանում, իսկ նրա խղճուկ դուտեր անշուք դագաղը, դէպի գերեզման:

Եւ ի՞նչ էք կարծում:

Չնայելով այդ բոլորին, ճիւղ Գամփոեանը վաղը կամ միւս օրը ֆրակով ու սպիտակ փողկապով բանւորի դատավարութեան ժամանակ, պիտի դրդացնէ դատարանը կամարները իր խեղաթիւր ձառերով, պիտի արդարացնէ իրան պաշտպանելով սուտը, ախտն ու ոճիրը, պիտի կորչի անմեղը... և ճշմարտութիւնը...

է՛հ, բայց մեր ժամանակներում քանի կուպէկ արժէ ճշմարտութիւնը:

Մարիկ



Արփիկը պճնագորդւած որպէս հէքեաթի սրբայարուստը, ապրում էր Գամփոեանի քեղ սալօնի հսկայ ֆիկուսների մէջ. սալայն նէրա մի ժամանակ գիրգ դէմքին այնպիսի հանելուկային թախիժ էր պատել, որից նամանում էր նէ մի ծերացած արախի-ի. նէ էլ չունէր նախկին թիթեռիկային անփոյթութիւնը, բիբերի ցոլքերը արել էին, ու այտերը մաշել... Կարճօրեայ փառաւոր կհանքից յետոյ, այնպէս փակել էր նէրա սիրտը, այնպէս ստելի էին թուում Գամփոեանի դահլիճները յոռի կհանքի պերճանքն ու երանութիւնը, որ նորից ձգտում էր իր հայրական դրափակ յարկի տակ: Անիրաւաբանը տեսնելով—որ հիւժարտը որդէն իր աւերումներն է գործում նէրա անկական կրճքի տակ, որ բացի մահից մի այլ բժիշկ չի կարող փրկել նէրան յղ պատուհասից, հակառակ չկանգնեց նէն, վերստին հօր տունը փոխադրելու...

է Թիֆլիսից մինչև Բաթում կանգնուածորին մէկ մանէթ տալ և առանց բիւլէթի գալ և փողն էլ կըմնայ իր ջէրին...

Երկար ու բարակ սոյնաման սակարկութիւնից յետոյ ավանսը ուղարկուեմ է և ուսուցիչը գալիս է:

— Հա, եկար, լաւ, դու պէտք ա մեր երեխաներին հայոց լեզու սովորացնես և եկեղեցում պատարագին էլ երգ ասես...

— Ուրախութեամբ պ. հոգաբարձու, միայն եթէ ձայներ լինեն որ կարելի լինի խումբ կազմել...

— Ոնց թէ ձայներ, բայց մեր երեխաները առանց ձայնի են...

— Ոչ, իմ խօսքը չորս ձայն խումբ պատրաստելու մասին է:

— Չորսը որն ա, դու կարող ես 24-ն էլ հաւաքել երեխաներից, փառք Աստուծոյ շատ կայ ուսուցիչներունում...

Անցնում են օրեր. նորեկ ուսուցիչը խնդրում է հոգաբարձուին, որ նա հրամայէ ուսուցչի սենեակի մաքրութեան վրայ հոգ տանել:

— Վա՛, էդ ինչ խօսք ա, շարաթը մէկ անգամ հաւաքում և սրբում է, բաւական է էլի, էլ ի՞նչ ես ուզում...

— Բայց միթէ՞ ձեր տանը շարաթը մէկ անգամ են մաքրում սենեակները...

— Էդ ի՞նչ խօսք ա, մենք ուրիշ, դուք, ուրիշ...

— Ես էլ նոյնպիսի մարդ եմ ինչպէս դուք պ. հոգաբարձու և պէտք ունեմ նոյնպիսի մաքրութեան...

— Էս ինչ նախալ մարդ ա էս վարժապետը, մտածում է հոգաբարձուն:

— Էս ինչ ախմախ մարդ է էս հոգաբարձուն, մտածում է ուսուցիչը. և բաժանում են իրարից:

Երբում եմ որ գրածս կհանքից վերցրած իրողութիւն է, ընթերցող:

Ա. Սառած

ՓԻԼԻՍՈՓՈՍՈՒԹԻՒՆԸ ՄԱՏՁԵԼԻ ԳԱՐՉՆԵԼՈՒ

Մ Ի Ջ Ո Յ Ն Ե Ր

(Հեղինակից)

Այն մարդը, որը պնդում է, թէ ինքը առիթ չէ ունեցել և դեռ չէ սկսել փիլիսոփայութեամբ զբաղել, նման է այն մարդուն, որը եթէ ասէր, որ նրա համար անցել է կամ դեռ չէ սկսել երջանկութիւնը:

Է պ ի կ ու ը

Բերելով մի կտոր հանրաձայնօթ փիլիսոփայ էպիկուրից, աւելորդ չեմ համարում այն աւելի պարզ կերպով բացատրելու:

Փիլիսոփայութիւնից անտեղեակ մարդը չգիտէ, թէ ինչպիսի վե՛ բաւականութիւն է տալիս փիլիսոփայութեամբ պարսպելը:

Այդպիսի մարդիկ կարծում են, որ փիլիսոփայութիւնը ինչ որ մի անհասկանալի և առեղծաձային գիտութիւնն է, որին

կարող են հասկանալ և ըմբռնել միայն Փալսար, Անակարմանդը, Սպինոզան և այլք, և որ փիլիսոփայութիւնը երկար ժամանակ է պահանջում, մտքի խիստ լարումն և մեծ համբերատարութիւն:

Այս բոլոր անարկութիւններից իրաւացի է միայն այն, որ իրաւ փիլիսոփայութիւնը բիշ ժամանակ է պահանջում, իսկ միւս անարկութիւնները հեռացնելու համար մենք հետեւեալ դիւրութիւնը կըտանք, առաջ թիւով յայտնի փիլիսոփաներից քաղածքներ:

„Ամեն ինչ հոսում է“

Հ ե ը կ լ ի տ

Մի անգամ մեծ Հերակլիտը առանց կըրկնակօշիկների զբօսնելիս, խիստ հարբուղի է ստանում: Նրա աշակերտների խումբը անմիջապէս մտնում է նրա մօտ՝ ուսուցչի ստոյղութիւնը իմանալու համար. խումբը դանդում է Հերակլիտին յատակի վրայ նըստած:

— Ի՞նչպէս է ձեր ստոյղութիւնը — հարցնում է նրա հնարագէտ աշակերտներից մէկը:

Փիլիսոփան խորը հառաչելով ցոյց է տալիս իր կարմրած բիթը և ասում.

— Շարունակ հոսում է:

Յայտնի դարձածքը մինչև օրս էլ դեռ չէ կորցրել իր նշանակութիւնը:

„Մարդը բոլոր անարկաների չափն է“:

Պ ը օ տ ա գ ո ը

Հագիւ թէ ընթերցողը կարողանայ երևակայել, թէ փիլիսոփայ Պրօտագորը կանանց ամենաջերմ երկրպագուներիցն էր:

Նրա համաքաղաքացիներից մի յայտնի անձնաւորութիւն, մէկ օր գտաւ Պրօտագորին իր կնոջ ննջարանում, նա զայրանում է այդ բանի վրայ և ցած նետում փիլիսոփային սանդուղքներից:

Նրա համաքաղաքացին մեծ զւարճութեամբ դիտում է, թէ ինչպէս այն մեծ անձնաւորութիւնը ընկնելիս անգամ հաշտում է սանդուղքի աստիճանները:

Փիլիսոփայի հայրենակիցը շատ դայրանում է և բացականչում Պրօտագորին:

— Ամօթ չէ Պրօտագոր, որ քո մեծութեամբ ես ուզում հաշտել տան բարձրութիւնը:

— Բոլորովին — պատասխանում է սառն կերպով փիլիսոփան, մարդը բոլոր անարկաների չափն է:

Այցելուն, զգալով իրեն պարտւած փիլիսոփայի այդպիսի խորն խօսքերից, ներողութիւն է խնդրում և միւս օրը հրապարակով հրաժարում է հասարակական բոլոր պաշտօններից:

„Իմ ամեն ինչը ինձ հետ եմ կրում“

Եօթը իմաստուններից մէկը, որի ազգ և անունը չենք յայտնում, նրա կենդանի յաջողների խնդրանք, որը բնուել էր շայրող գանձարկը կոտրելիս, դատաւորների այն հարցմունքին, թէ ինչով է բա-

ցատրում նրա գրպանում դուրի (գործիք) և երկու բանալիների գանձակը: Փիլիսոփան պատասխանում է.

— Իմ ամեն ինչը — ինձ հետ եմ կրում: Դատաւորները շատ զարմացան այդպիսի ճիշտ պատասխանի վրայ:

„Մարդը նա է, ինչ ուսում է“

Փ է յ ն ը ա խ

Բնութիւնից մեղմ լինելով յայտնի փիլիսոփան, չէր կարող որեւէ մէկին կոպտ խօսք ասել, եթէ անգամ այդ մարդը արժանի լինէր դրան:

Ամենաբարեկացած բողէին, նա վերցնում էր իրեն անտանելի մարգու թիքից և տանում ճաշարան: Զայրացնող մարդը ստամոքսը կշտացնելով այնպէս էր մեղմանում և բարեկամանում Ֆէյերբախի հետ, որ վերջինս էր ստիպւած լինում ներողութիւն խնդրելու իրեն բարեկացողից:

Փիլիսոփայի մօտիկ մարդիկ պատմում են, որ հանճարեղ Ֆէյերբախը իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում այս ճաշարանից այն ճաշարանը մտնելով, իր անհանճոյ այցելուներին տապակած լեզուկ կամ գառան մտով մեղմացնելու համար:

Բայց այնուամենայնիւ յայտնի փիլիսոփան ամենուրեք հաստատում էր, որ իրեն հասցրած ամեն մի դայրոյթ անպատիժ չէ մնացած:

Գ-1.



Հ ե Ռ Ռ ի

Հեռու անցիր, մի՛ մօտենար, Երբ ասում ես հոգով դու ինձ, Կեղծ դիմակդ էլ մի՛ ցոյց տար, Երբ ծաղրեցիր իմ սէրը ջինջ:

Երբ դու անհա՛ս, թեթեւամիտ ծաղր ու ծանակ, հե՛գնանք արի՛ր՝ Էլ չե՛մ ուզում քո կեղծ քօղի շայնացք գցել, գնա՛, կորի՛ր...

* * *

Դու անցա՛ր — ինձ տարար Կաշկանդա՛ծ ու մոյ՛ր — Հողմա՛նար, ցրտա՛նար՝ Ես լացի ամեն օ՛ր...

Դու անփոյթ ու անգով Մատնեցիր չարքերին, Դու անսիրտ ու անկուշտ՝ Ծաղրեցիր իմ կեանքին:

Նարգիզ





Օ Փ Ի Տ Ա Ի Ո Ր Է Ա Ր Ս Ն Ա Ց Ո Ի Ն

Կ Ե Ղ Ծ Ա Խ Ո Ր Ն Ե Ր Ը

(Արևելեան զրոյցներէց)

Սուլթանն զգում էր, որ իր վերջը մօտեցել է և ինքը շուտով մեռնելու է: Այդ պատճառով նրա մահուան անկողնու շուրջն էին հաւաքել նազիր-վեզիրն ու բարձր պաշտօնեաները:

Ամենն էլ իրանց սրտում գաղանի ուրախանում էին, որ դաժան ու արիւնարբու ինքնակալը վերջապէս մեռնելու է:

Նոյն իսկ այդ հանդիսաւոր ժամին՝ գահական դահլիճի խորքում պատրաստի կանգնած էին դահիճները:

Ինքնակալը՝ գոհունակ ժպտով՝ զննաբար նայեց բոլոր ներկայ եղողներին զէմքերին՝ և ասաց.

— Կեանքիս մէջ ես շատ մեղքեր եմ գործել և շատ անմեղներ եմ կախել ու գլխատել: Այդ բանը ձեզ ուրիշներէց լաւ յայտնի է. ժողովրդին նոյնպէս յայտնի է:

— Դու միշտ էլ ողորմած և արգարադատ ես եղել, ո՞վ դու իմաստութեան արև ու հեղուկեան աստղ, — պատասխանեցին մի-նիստըներն ու աւագանիները:

— Սոստովանեցէք, որ ես անուամենայնիւ՝ թէ ձեզ և թէ ժողովրդի համար բարեքներ շատ եմ արել: Այնպէս որ, հաստատ համոզւած եմ, իմ մահը ձեզ համար ցաւալի կը լինի:

— Ո՛հ, այո՛, ո՞վ արգարներէց ամենարգարդ, — բացականչեցին շրջապատողները և սկսեցին աչքերը սրբել, իբր թէ այնտեղից արցունքներ են թափւում:

— Եւ դուք անչափ ցաւելու էք իմ մահին, այնպէս չէ՞:

— Ո՛հ, այո՛, ի՞նչ խօսք, ո՞վ ամենակարող խալիֆ, — կրկնում էին պալատականները, կեղծ ու սուտ հեծկլտալով:

— Ասել է թէ՛ ասանց ինձ ձեզ համար շատ զժուար և անկարելի է ապրել:

— Ի հարկէ անկարելի է:

Ես այդպէս էլ իմանում էի: Շատ լաւ, նախ քան իմ բաժանելը ձեզնից՝ ես մի պարտք եմ ունեւմ կատարելու, որպէս յանցագործ, պիտի զղջամ: Դուք այս կեանքում չպիտի տանջէք, — դրա մասին հոգալն իմ պարտքն է:

Եւ նշան տւեց իր դահիճներին՝ որոնք անյայտալ մօտեցան՝ — նրանց բոլորին դուրս տանելու և բոլորին միատեղ գլխատելու համար:

Թարգմ. Գ. Բարսեղեան



ՊՈՊԱՍ ԵՆԲԵՆԵՐ

1. Մենակ ուրախանալու...

— Մարդու, դու որ հիւր ես գնում, մենակ ես գնում, թէ ամուսնուդ հետ:

— Ի հարկէ, մենակ սիրելիս. չէ որ ես գնում եմ ոչ թէ տիրելու, այլ ուրախանալու...

2. Երկու կրակը մէջ.

Մի ծեր ամուսին ասում է իր կնոջը.

— Դու յաճախ խօսում ես քո նոտիկին ամուսնու մասին. արդ այդ բանն ինձ չի դուր գալիս:

— Իրան, քեզ չի՞ դուր գալիս. շատ գեղեցիկ այդ դէպքում ես կը խօսեմ իմ ապագայ ամուսնու մասին:

3. Ով ումից է վախում.

— Ճիշտն ասած՝ կի՛նն աւելի քաջ է քան տղամարդը:

— Դա ծիծաղելի է: Հապա կի՛նը որ վախում է մկնից:

— Այո՛, այո՛, իսկ տղամարդը որ վախում է կրնկանից?!

4. Բազուքիւն.

— Ինչո՞ւ նորապսակներով ամենն էլ հետաքրքրւում են, ասանձին ուշադրութեամբ դիտում...

— Որովհետեւ բոլորն էլ զարմանում են նրանց Բազուքիւն վրայ:

5. Անկողնու՛ր.

Մայրը. — Ինչպէ՞ս համարձակեցար քեռուդ «յիմար» ասել: Այս բոլորիս ներողութիւն խնդրիր:

Որդին. — Բեախ. ներիր ինձ, որ դու յիմար ես:

6. Մեղմացուցիչ դէպք.

Հայրը. — Երբէք չէի մտածել, որ ուսումնայայտէս թանգ է նստում:

Որդին. — Հայրիկ, ի նկատի ունեցիր, որ ես դեռ ուրիշ աշակերտներից պակաս եմ պարապում, հա՞ն...

7. Երեխաներից վախեցողը.

Տղամարդկանց հասարակութիւնից խուսափող մի օրիորդի հարցնում են, թէ՛

— Օրիորդ, պատճառն ի՞նչ է, որ տղամարդկանցից վախում էք:

— Ես ոչ թէ տղամարդկանցից եմ վախում, — պատասխանում է նա, հառաչելով,

— այլ՝ երեխաներից...

8. «Արժէ՛ միթէ...»

— Վերջապէս, ի՞նչ էք կամենում ինձնից:

— Մի համբոյր:

— Ա՛յ տխմար. արժէ՞ միթէ մի համբոյրի համար երկու վերստից աւելի ճանապարհ անցնել:

9. Փամանակակից օրիորդի կարծիք.

— Օրիորդ կի՛զա, լրագրի մէջ այսօր կարդացի, որ մի մարդ սպանել է իր կնոջը՝ նրան սիրեկանի հետ մի տեղ հանդիպած վայրում...

— Որպիսի գազանութիւն... Օ՛յ-օյ-օյ... նրանից յետոյ ամենևին չարժէ մարդու գնալ...

Համայնացրեց Եզոպ ծայրայեղ վարդապետ

ՄՏԻՆԵՐ ԵՒ ԱՅԻՆԻՔԱՆԵՐ

Մարդու սրտից բղիւսած ընտիր կանոնները նոյնչափ օգտակար են, որչափ լաւ օրինակները: Սենեկա

Հագարաւոր ճանապարհներ տանում են դէպի մոլորութիւն, իսկ դէպի ճշմարտութիւն՝ միայն մէկը:

Ժ. Ժ. Ռուսսօ

Ոչ թէ մտածել է նարկաւոր, այլ գործ անել: Շէքսպիր

Եթէ ունիս լայն թիկունքներ, ամուրջդ եւ ուժեղ թաւ ձայն, եթէ դու մտախարաչի ես, պարծենկոտ, իսկ երբեմն էլ անպիտանի մէկը, — դու կարող ես յոյս դնել մարդկանց բարեացակամութեան վրայ, նրանք քեզ կանամենն հսկայ հանճար եւ Աստուծ գիտէ թէ ինչ:

Համեուլինգ

Ով վախում է մահից՝ նրա կեանքը կեանք չէ:

Չէյմէ

Կեա՛ քը ոչ բաւականութիւն է եւ ոչ էլ տանջանք, այլ գործ, որ պարտաւոր ենք անել եւ ազնութեամբ հասցնել մինչեւ վերջ:

Տօկելլ

Ամենահարուստը նա է, ով կորցնելու բան չունի:

Չինական իմաստ

Ուրիշներին ներիր շատ բան. իսկ քեզ ոչինչ:

Պուրլի Սիրուս

Ոչնչացրու մի արատ, իսկ տասն իրանք իրենց կանխայտանան:

Ռօդ

Ով խաւարը չէ նկատում, նա երբէք չի կարող դէպի լոյս դիմել:

Բօկլ



Ո Ի Ղ Ղ Ե Ց...


— Սնքուլ ջան, Սնքուլ. տրամաւայ իդիեօս թէ իդիեօս...

— Հը՛. ի՞նչ իս ասում, Յական ջան,

— Տրամաւայ գալիս է, թէ գնում է...

— Ասա՛, իդեօզ, թէ իդեօմ, ուղեց Սնքուլը, որ յանձն էր առել Յականին ուսուսելն սովորեցնել:

Գի.օ.Ղ.Կօ



ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

МАГАЗИНЪ
КОМПОЗИЦІЯ

Тифлисъ, Пушкинскіи пассаж№ 8

Громадная экономія
шведскаго композиціон. бѣлья
Носится не менѣе двухъ лѣтъ
Постоянный большой выборъ свѣжаго товара
ВОРОТНИКОВЪ, МАНИШЕКЪ И МАНЖЕТЪ
По фабричнымъ цѣнамъ
Передѣлка въ любой фасонъ бесплатно



Продаются портняжныя принадлежности, как-то пугойцы, подкладки, мѣль и прочѣе.
ИНЪЕТТА ТУТЬ-ЖЕ ГАЛАНТЕРЕЙНЫЙ ОТДѢЛЪ

Остерегайтесь подделокъ и подражаній

Просимъ обратиться только Пушкинскій пассажъ № 8

15—6 (о. ш.) М. А. КАЛТАКЯНЪ

ПАПИРОСЫ
ЭКСТРА
5 шт. 6 коп.
ФАБРИКИ А.ЭНФИДЖИАНЦА

ПАПИРОСЫ
ГОЛУБКА 10 шт. 3 коп.
ФАБРИКИ А.ЭНФИДЖИАНЦА

ФАБРИКИ А.ЭНФИДЖИАНЦА
ПАПИРОСЫ
ИНТЕЛЛИГЕНТНЫЯ
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.

Բ Ժ Ի Ե Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մանագիրութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հրատարակութիւններ:

Հնդուում է հրատարակել իր ծով. տպեր ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28.

0—2

Բ Ի Ս Տ Ո Ր Ե Ն - Ճ Ա Ծ Ե Ր Ե Ն

„ԴԻԼԻ ՊՈՒՉՈՒՐ“

Քաղաքի կենտրոնում, ամենայարմար տեղ թամամշեան քարվանսարայի տակ

ՄԻՅՏ ԹԱՐՄ ՄԹԵՐՔԻՑ

— Եւրոպական եւ ասիական-կովկասեան ճաշացուցակ —

Հնար ըմպելիներ, զով կարենեա-սենեակներ մաքուր խոհանոց ու պատրաստակամ ծառաներ

25—23

XX



Պերվոկլ. ресторанъ „АНОННА“



„Здание Артистического Общества“

Сод. Я. Т Бондаренко Ежедневно отъ 2 час. до 5 час. пополудни и вечеромъ отъ 10 час.

до 2-хъ час. ночи. играетъ вновь приглаш. итальянскій струнный оркестръ, съ пѣніемъ, егю обегтѣпѣвиць —г-жи Сакко и Марія Оландезе и баритона Дж участіемъ ндезе, подь управленіемъ САККО.

ЗАВТРАКИ, отъ 11 час. до 1 час. дня 80 к. Обѣды, отъ 2 час. до 6 час. пополудни: изъ 2-хъ блюдо—60, трехъ—90 к. и четырехъ—1 р. 20 к. Кухня Европейская и Азіятская; билліарды. Имѣются кабинеты. отъ жары можно спастись только въ

„А Н Н О Н Ъ“

52—23

XX

— Լոյս տեսաւ առանձին գրքով և վաճառոււմ է —

Ն Ա Բ - Դ Ո Ս

Պ Ա Յ Բ Ա Ր

Վ Է Պ

Գրքէ 75 կողկ

Գլխաւոր պահեստը «Գուտտենբերգ» գրատանութեամբ, ուր և դիմում են զոււմարով գնողները:

10—3

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ
ԳՐԱԳՈՐԾՈՅԵՆ



ՔՕՏԵՐ 2.

Հագար երեսանոց գիրքս խայտառակեց ինձ. երեսոց, որ իմ գրածն է, դրա համար էլ յիմար ըսն է. կրկին հին փէշակի դիմեմք—խորջինի օգնութեանը—ես ալլա՛հ, ես վալլա՛հ—անուն կրհանեմք.

ՉԷ, ՉԵՄ ԿԱՐՈՂ... ԱՂՔԱՏ Է



ՔՕՏԵՐ 2.

—Ա՛յ որդիս, ես էլ, ժողովուրդն էլ խնդրում ենք քեզ, որ էս քարուքանդ եղած եկեղեցու երեցփոխը կրենս ու մեր ուսումնարանին էլ հոգաբարձու.
—Չէ, չեմ կարող, դրա զօրութիւնը վկայ—աղքատ եկեղեցի է, արա ի՞նչ ձեռ կրտայ.